# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՏԱՆՁԱՎԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Սյունիքի մարզ, գ. Տանձավեր, էլ. հասցե՝ tandzaver@mail.ru

28.01.2017թ.

ՀՀ Սյունիքի մարզպետ
Վ. Հակոբյանին

Հարգելի պարոն Հակոբյան

Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Սյունիքի մարզի Տանձավեր համայնքի ավագանու 1-Ա, 2-Ն, 3-Ն, 4-Ն, 5-Ն, 6-Ն որոշումները:

ՀՀ Սյունիքի մարզի Տանձավեր համայնքի ղեկավար՝ Մ. Թումանյան

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
ՄՈՒՏՔ № 1403
«9» 02 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՏԱՆՁԱՎԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Սյունիքի մարզ, գ. Տանձավեր, էլ. հասցե՝ tandzaver@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

ԹԻՎ 1-Ա

«28» «Հունվար» 2017թ.

## ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁԱՎԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ 28.01.2017Թ-Ի ԹԻՎ-1 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման Մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ՝5 , դեմ՝0 , ձեռնպահ՝0 , համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Տանձավերի համայնքի ավագանու 28.01.2017թ-ի թիվ 1-ին նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Տանձավեր համայնքի 2016թ-ի բյուջեի կատարման տարեկան հաշվետվություն:
2. Տանձավեր համայնքի 2017թ. բյուջեյի նախագծի հաստատման մասին:
3. Տանձավեր համայնքի 2017թ-ի գույքագրման փաստաթղթերի հաստատման մասին:
4. Տանձավեր համայնքի ղեկավարի, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին:
5. Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի հաստատման մասին:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տանձավեր համայնքի ավագանու անդամներ՝

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ժ. Բաղդասարյան | (ստորագրություն) | | |
| Հ. Գևորգյան | (ստորագրություն) | | |
| Ռ. Զաքարյան | (ստորագրություն) | | |
| Ա. Հակոբյան | (ստորագրություն) | | |
| Մ. Ղազարյան | (ստորագրություն) | | |

Տանձավերի համայնքի ղեկավար՝ Մ. Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՏԱՆՁԱՎԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Սյունիքի մարզ, գ. Տանձավեր, էլ. հասցե՝ tandzaver@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«28» «Հունվար» 2017թ. ԹԻՎ 2-Ն

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁԱՎԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝0 , համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Տանձավեր համայնքի ղեկավար Մ. Թումանյանի կողմից ներկայացված համայնքի 2016թ-ի բյուջեի տարեկան հաշվետվությունը:

Կցվում է 1 թերթ:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տանձավեր համայնքի ավագանու անդամներ՝

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ժ. Բաղդասարյան | | | |
| Հ. Գևորգյան | | | |
| Ռ. Զաքարյան | | | |
| Ա. Հակոբյան | | | |
| Ս. Ղազարյան | | | |

Տանձավերի համայնքի ղեկավար՝ Մ. Թումանյան

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2016թ

## Մուտքեր – եկամուտներ

| | Վարչական բյուջե | | Ֆոնդային բյուջե | |
|---|---|---|---|---|
| | պլան | փաստ | պլան | փաստ |
| Տարեսկզբի ազատ մնացորդ | | | | |
| Հողի հարկ | 380,4 | 380,4 | | |
| Հողի հարկի ապառք | | | | |
| Գույքահարկ | 260,0 | 251,9 | | |
| Գույքահարկի ապառք | | | | |
| Հողի վարձակալության վճար | 100,0 | 100,0 | | |
| Հողի վարձավճարի ապառք | | | | |
| Տեղական տուրքեր | | | | |
| Այլ մուտքեր | | | | |
| Ընդամենը սեփական եկամուտներ | 740,4 | 732,3 | | |
| Դոտացիա | 3500,0 | 3500,0 | | |
| Սուբվենցիա | 1067,6 | 1067,6 | | |
| Այլ կապիտալ տրանսֆերտներ | | | | |
| Նվիրատվ., ժառանգ. իրավ. ֆիզիկ. անձ և կազմ. | | | | |
| Այլ հիմնական միջոցների օտարումից եկամուտներ | | | | |
| Ընդամենը մուտքեր | 5308,0 | 5299,9 | | |

## ԾԱԽՍԵՐ

| Հ/Հ | Ծախսային հոդվածների անվանումը | հոդված | Կառավարման ապարատ | | | | | | | | Պահուստային ֆոնդ | | Նախորդ տարիների պարտքեր | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | պլան | փաստ | պլան | փաստ | պլան | փաստ | պլան | փաստ | պլան | փաստ | պլան | փաստ | պլան | փաստ |
| | ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ | | | | | | | | | | | | | | | |
| 1 | Աշխատավարձ | 4111 | 4981,0 | 4972,9 | | | | | | | | | | | 4981,0 | 4972,9 |
| 2 | Էներգետիկ ծառայություն | 4212 | 12,0 | 12,0 | | | | | | | | | | | 12,0 | 12,0 |
| 3 | Կապի ծառայություն | 4213 | | | | | | | | | | | | | | |
| 4 | Ներքին գործուղումներ | 4221 | 20,0 | 20,0 | | | | | | | | | | | 20,0 | 20,0 |
| 5 | Վարչական ծառայություններ | 4231 | 30,0 | 30,0 | | | | | | | | | | | 30,0 | 30,0 |
| 5 | Տեղեկատվական ծառայություն | 4234 | 0 | 0 | | | | | | | | | | | | |
| 6 | Գրասենյակային նյութեր և հագուստ | 4261 | | | | | | | | | | | | | | |
| 7 | Տրանսպորտային նյութեր | 4264 | | | | | | | | | 265,0 | 265,0 | | | 265,0 | 265,0 |
| 8 | Պահուստային միջոցներ | 4891 | | | | | | | | | | | | | | |
| 9 | Վարչական սարքավորումներ | 5122 | | | | | | | | | | | | | | |
| 10 | Այլ մեքենաներ և սարքավորումներ | 5129 | | | | | | | | | | | | | | |
| 11 | Հատուկ նպատակային այլ նյութեր | 4269 | | | | | | | | | | | | | | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | | 5043,0 | 5034,9 | | | | | | | 265,0 | 265,0 | | | 5308,0 | 5299,9 |

Համայնքի ղեկավար՝ Ս. Ֆումանյան

Հաշվապահ՝ Կ. Հարությունյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՏԱՆՁԱՎԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Սյունիքի մարզ, գ. Տանձավեր, էլ. հասցե՝ tandzaver@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«28» «Հունվար» 2017թ.                                                            ԹԻՎ 3-Ն

## ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁԱՎԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով և 55-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ՝5 , դեմ՝0 , ձեռնպահ՝0 , համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Տանձավեր համայնքի ղեկավար Մ. Թումանյանի կողմից ներկայացված Տանձավեր համայնքի 2017թ-ի բյուջեյի նախագիծը:

Առդիր՝ թերթ 1

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տանձավեր համայնքի ավագանու անդամներ՝

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ժ. Բաղդասարյան | | | |
| Հ. Գևորգյան | | | |
| Ռ. Զաքարյան | | | |
| Ա. Հակոբյան | | | |
| Ս. Ղազարյան | | | |

Տանձավերի համայնքի ղեկավար                                        Մ. Թումանյան

ավագանու 2017թ․ հունվարի 28_ի
N 3_Ն որոշման

# 2017թ. Բյուջե

## Մուտքեր- եկամուտներ

հազ. դրամ

| | | Վարչական բյուջե | Ֆոնդային բյուջե |
|---|---|---|---|
| Տարեսկզբի ազատ մնացորդ | X | 380,4 | X |
| Հողի հարկ | X | - | X |
| Հողի հարկի ապառք | X | 286,0 | X |
| Գույքահարկ | X | - | X |
| Գույքահարկի ապառք | X | 120,0 | X |
| Հողի վարձակալության վճար | X | - | X |
| Հողի վարձավճարի ապառք | X | - | X |
| Եկամտահարկ | X | - | X |
| Տեղական տուրք | X | - | X |
| Այլ ոչ հարկային եկամուտներ | X | - | X |
| Այլ մուտքեր | X | 786,4 | X |
| Ընդամենը սեփական եկամուտներ | X | - | X |
| Դրամաշնորհ | X | - | X |
| Վարձատրվող հաս. աշխատանք. | X | X | |
| Այլ կապիտալ տրանսֆերտներ | X | 3590,5 | |
| Դոտացիա | X | 4376,9 | |
| Ընդամենը մուտքեր | X | | |

## Ծախսեր

հազ. դրամ

| Հ/հ | Ծախսային հոդվածների անվանումը | Կառավար ապարատ | Մանկապ արտեզ | Անասնաբ. ծառ. | Պահուստ . ֆոնդ | Նախորդ տարիների պարտքեր | Ընդամենը վարչական բյուջե | Ընդամենը ֆոնդային բյուջե |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | - | - | 4132,9 | X |
| 4111 | Աշխատողների աշխատավարձ և հավելավճարներ | 4132,9 | - | - | - | - | - | X |
| 4131 | Սոցիալական ապահովության վճարներ | - | - | - | - | - | 15,0 | X |
| 4212 | Էներգետիկ ծառայություններ | 15,0 | - | - | - | - | - | X |
| 4212 | Ջեռուցման ծախսեր | - | - | - | - | - | - | X |
| 4213 | Կոմունալ ծառայություններ | - | - | - | - | - | - | X |
| 4214 | Կապի ծառայություններ | - | - | - | - | - | - | X |
| 4221 | Ներքին գործուղումներ | - | - | - | - | - | - | X |
| 4231 | Վարչական ծառայություններ | - | - | - | - | - | - | X |
| 4234 | Տեղեկատվական ծառայություններ | - | - | - | - | - | - | X |
| 4239 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | - | - | - | - | - | - | X |
| 4241 | Մասնագիտական ծառայություն | - | - | - | - | - | - | |
| 4251 | Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | - | - | - | - | - | - | X |
| 4252 | Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և ապահովում | - | - | - | - | - | 10,0 | X |
| 4261 | Գրասենյակային նյութեր և հագուստ | 10,0 | - | - | - | - | - | X |
| 4264 | Տրանսպորտային նյութեր | - | - | - | - | - | - | X |
| 4267 | Կենցաղային և հանրային սննդի նյութեր | - | - | - | - | - | - | X |
| 4269 | Հատուկ նպատակային այլ նյութեր | - | - | - | - | - | - | X |
| 4511 | Սուբսիդիաներ | - | - | - | - | - | - | X |
| 4729 | Այլ նպաստներ բյուջեից | - | - | - | - | - | - | |
| 4819 | Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին | - | - | - | 219,0 | - | - | |
| 4891 | Պահուստային միջոցներ | - | - | - | - | - | - | |
| | Այդ թվում համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ | - | - | - | - | - | X | |
| 5113 | Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | - | - | - | - | - | X | |
| 5122 | Վարչական սարքավորումներ | - | - | - | - | - | X | |
| 5122 | Տրանսպորտային սարքավորումներ | - | - | - | - | - | X | |
| 8111 | Անշարժ գույքի իրացումից մուտքեր | - | - | - | - | - | X | |
| 8411 | Հողի իրացումից մուտքեր | - | - | - | - | - | | |
| | Ընդհանուր ծախսեր | 4157,9 | - | - | 219,0 | - | 4376,9 | |
| | Տարեվերջի մնացորդ | | | | | | | |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՏԱՆՁԱՎԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Սյունիքի մարզ, գ. Տանձավեր, էլ. հասցե՝ tandzaver@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

«28» «Հունվար» 2017թ. ԹԻՎ 4-Ն

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁԱՎԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ-Ի ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ՝5 , դեմ՝0 , ձեռնպահ՝0 , համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Տանձավեր համայնքի 2017թ-ի գույքագրման փաստաթղթերը, համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տանձավեր համայնքի ավագանու անդամներ՝

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ժ. Բաղդասարյան | | | |
| Հ. Գևորգյան | | | |
| Ռ. Զաքարյան | | | |
| Ա. Հակոբյան | | | |
| Ս. Ղազարյան | | | |

Տանձավերի համայնքի ղեկավար՝ Մ. Թումանյան

# ՑԱՆԿ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁԱՎԵՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ

| Հերթական համարը | Օբյեկտի անվանումը և համառոտ բնութագիրը | Թողարկման /կառուցման/ տարեթիվը | Համարը | | | Փաստացի առկայությունը | | Հաշվապահական հաշվառման տվյալներով | | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | գույքային | գործարանային | անձնագրի | քանակը | արժեքը /դրամ/ | քանակը | արժեքը /դրամ/ | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| | | | | | | 1 | 2134300 | | | |
| 1 | Վարչական շենք | | | | | 1 | 5818650 | | | |
| 2 | Մանկապարտեզ շենք | | | | | 1 | 1052700 | | | |
| 3 | Միասնական ծառայությունների շենք | | | | | 1 | 2300000 | | | |
| 4 | Կենցաղի տուն | | | | | 1 | | | | |
| 5 | Եկեղեցի | | | | | 1 | | | | |
| 6 | Հուշարձան | | | | | 1 | | | | |
| 7 | Կամուրջ | | | | | 1 | | | | |
| 8 | Գերեզմանոց | | | | | 1 | | | | |
| 9 | Կշեռք | | | | | 1 | | | | |
| 10 | Ջրամբար | | | | | 5 կմ | | | | |
| 11 | Ջրատար | | | | | | | | | |

Տանձավեր համայնքի ղեկավար` Է. Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՏԱՆՁԱՎԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Սյունիքի մարզ, գ. Տանձավեր, էլ. հասցե՝ tandzaver@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«28» «Հունվար» 2017թ. ԹԻՎ 5-Ն

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁԱՎԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁԱՎԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁԱՎԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի 3-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 11-րդ և 28-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ՝5 , դեմ՝0 , ձեռնպահ՝0 , համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Տանձավեր համայնքի ղեկավարի, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի 1:

2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2016 թվականի հունվարի 18-ի թիվ 1-ին նիստի 3-Ա որոշումը:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տանձավեր համայնքի ավագանու անդամներ՝

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ժ. Բաղդասարյան | [signature] | | |
| Հ. Գևորգյան | [signature] | | |
| Ռ. Զաքարյան | [signature] | | |
| Ա. Հակոբյան | [signature] | | |
| Ս. Ղազարյան | [signature] | | |

Տանձավերի համայնքի ղեկավար՝ [signature] Մ. Թումանյան

Հավելված N 1

ՀՀ Սյունիքի մարզի Տանձավերի գյուղական համայնքի

ավագանու 2017թ. հունվարի 28 _ի N 5_Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁԱՎԵՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 4 :
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| **ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ** | | |
| Համայնքի ղեկավար | 1 | 135500 |
| | | |
| | | |
| **ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ** | | |
| Աշխատակազմի քարտուղար | 1 | 79000 |
| Առաջատար մասնագետ-հաշվապահ | 1 | 78000 |
| | | |
| | | |
| **ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ** | | |
| Ակումբա-գրադարանավար | 0.75 | 54563 |
| | | |
| | | |
| | | |
| | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՏԱՆՁԱՎԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Սյունիքի մարզ, գ. Տանձավեր, էլ. հասցե՝ tandzaver@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«28» «Հունվար» 2017թ. ԹԻՎ 6-Ն

## ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁԱՎԵՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-19րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով՝ կողմ՝5 , դեմ՝0 , ձեռնպահ՝0 , համայնքի ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Տանձավեր համայնքի վարչական տարածքում սահմանել հետևյալ տեղական տուրքերը և վճարները, համաձայն հավելված 1 և 2-ի:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տանձավեր համայնքի ավագանու անդամներ՝

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ժ. Բաղդասարյան | | | |
| Հ. Գևորգյան | | | |
| Ռ. Զաքարյան | | | |
| Ա. Հակոբյան | | | |
| Ս. Ղազարյան | | | |

Տանձավերի համայնքի ղեկավար՝ Մ. Թումանյան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Տանձավերի
համայնքի
ավագանու 2017 թվականի
հունվարի 28-ի N 6-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁԱՎԵՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝

1) հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 5000 դրամ,

2) Սույն կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10000 դրամ,

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝16000 դրամ,

գ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 23000 դրամ,

3) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000 դրամ,

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1000 դրամ,

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝ 1500 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2000 դրամ,

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2000 դրամ:

5. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ,

2) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության ընթացիկ տարվա համար՝ 150000 դրամ,

3) թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության յուրաքանչյուր տարվա համար սահմանել՝ 50000 դրամ:

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24$^{00}$-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ,

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 դրամ,

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 300000 դրամ,

4) խաղատների կազմակերպման համար՝ 500000 դրամ,

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 400000 դրամ,

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրք սահմանել՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ,

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը մինչև 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3000 դրամ,

3) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ,

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 1000 դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 5000դրամ:

10. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 5000 դրամ:

11. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 1000 դրամ:

12. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար սահմանել՝ 1000 դրամ:

**Տանձավեր համայնքի ղեկավար Ս. Թումանյան**